

ԼԵԶՈՒԿՆԻՏԵՍԿԱՆ

ԳՐԱԲԱՐԸ

ԽՕՍԱԿՅԱԿԱՆ ԼԵԶՈՒ ԷՐ(°)

Մեր ուսումնականները շատ անգամ են զբաղուել այն հարցով թէ՛ Ս. գարի հայերէնը, այն լեզուն՝ որով գրուած են Ս. Գիրքը, Յզնիկը, Ոսկեբերանը ևն. ժամանակի ժողովրդեան խօսակցական լեզուն էր, թէ արուեստական մի լեզու՝ որ յօրինեցին Մեսրոպ, Սահակ և Իրենց երէց աշակերտները: Ոմանք առաջինի կողմն են, բայց շատեր երկրորդ կարծիքին են. ուրիշներ էլ բռնուած են միջին դիրք, այսինքն ընդունում են որ Ս. գարից մեզ աւանդուած այդ հայերէնը (գրաբարը) ժամանակի խօսակցական լեզուն էր, բայց Սահակ և Մեսրոպի ձեռքով գրական մշակութիւն կրած, կոկուած ու բարբոխտուած էր:

Մի անգամից ասենք՝ որ արուեստական լեզուի գաղափարը հակառակ է գիտական լեզուաբանութեան սկզբունքներին և օրէնքներին: Ոչ մի տեղ, մարդկային պատմութեան ընթացքում տեսնուած չէ ինքնահանար արուեստական մի լեզու կամ այդպիսի մի լեզուով գրուած գրականութիւն: Նոյն իսկ այն արուեստական լեզուները՝ որ ժ.ժ. գարուց սկսեցին յօրինել զանազան գիտուններ՝ միջազգային հաղորդակցութեան պահանջներին բաւարարութիւն տալու համար. (ինչպէս Վոյպպիւկ, Էսպերանտո Իտո ևն.), զեն մինչև այժմ, հակառակ գիտունների ու պետութեանց և միջազգային զանազան կոնգրէսների ջանքերի և աշխատանքի՝ արմատ չեն բռնել: Նրանք անցել են և անցնում են նորաձեւութիւնների նման, մինչդեռ գրաբարը (այսինքն Ս. գարի արուեստական լեզուն) գարի շարունակ շարունակել է իր գոյութիւնը: Եթէ այդքան գիտուններ պետութիւններ և միջազգային կոնգրէսներ, այս Լուսաւոր դարերում, չեն կարողանում

կեանք տալ ու պահել մի արուեստական լեզու, միթէ՞ Սահակ և Իրենց սակաւաթիւ աշակերտների խմբակը աւելի ուժեղ էին քան բոլոր՝ որ կարողացան թէ ստեղծել և թէ պահել այդ արուեստական լեզուն (գրաբարը) այնքան դարեր շարունակ:

Նախ հարց տանք. ինչու՞ համար Սահակ և Մեսրոպ պիտի ստեղծէին արուեստական լեզուն. անշուշտ այդ լեզուով մի գրականութիւն ունենալու համար. իսկ ինչու՞ համար պիտի ունենային այդ գրականութիւնը. — ի հարկէ ժողովրդի պահանջներին բաւարարութիւն տալու համար: Ներկայ զէպքում մենք գիտենք որ Սահակ և Մեսրոպի նպատակը հայ ժողովրդի քրիստոնէական դաստիարակութիւնն էր, նրա ձեռքը հայերէն լեզուով գրուած Ս. գիրք տալն էր: Եթէ այդ գիրքը պիտի ծառայեր լոկ իբրև սրբութիւն կամ իբրև կուռք, ինչպէս պիտի լինէր՝ արուեստական մի լեզուով, այն ժամանակ ի՞նչ կարիք կար այնքան նեղութեամբ թարգմանելու հայերէնի, քանի որ յունարէն և ասորերէն Ս. Գիրքը արդէն կար և գործածուած էր հայ ժողովրդի մէջ: Եթէ Մեսրոպ եւ բոլոր թարգմանիչները տառապում ու գանգատուում էին այն բանից՝ որ հայ ժողովրդը ոչինչ չի հասկանում յունարէն կամ ասորերէն Ս. Գիրքից, ինչպէս, ինչպէս մասին նրա ձեռքը մի ուրիշ արուեստական լեզուով գրուած Ս. Գիրք, որ նոյնպէս անհասկանալի պիտի մնար նրան: Այս մտածութիւնները մեզ ստիպում են ընդհանրել որ այն լեզուն՝ որով թարգմանուեց Ս. Գիրքը հայ ժողովրդին հասկանալի, այսինքն նրա խօսած լեզուն էր:

Մեր աչքի առջ իբր օրինակ ունինք հարիւրաւոր դէպքեր զանազան գրական նութեանց ստեղծման, մանաւանդ քրիստոնէական քարոզչութեան նպատակով, ինչպէս եղաւ Ս. Մեսրոպի ժամանակ հայոց մէջ: Թողնելով սլաւական և գոթական գրականութեանց ստեղծումը Աւետարանի թարգմանութեան միջոցով, յիշենք Անգլիացի և Ամերիկացի ժողոջական միսիոնարների քարոզչական գործունէութիւնը Աֆրիկէի զուլուաների, Ամերիկայի վայրերի ներքի և կամ մեր հարեւան անգրագէտ քրդերի մէջ: Ինչ ևս նուեմ այդ քարոզիչները: Արդեօք որեւէ արուեստական

(°) Վերցուած՝ մեծաւուկ հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործին (ԺԶ. Եւ ԺԸ. Գրախ):

լեզու են ստեղծում և գրանով սկսում իրենց քարոզութիւնը: Ոչ, նրանք մի քանի տարի ձեռնում են այդ ժողովուրդների մէջ, ուչարուծեամբ սովորում են ժողովրդի խօսած լեզուն և յետոյ տառեր յարմարեցնելով թարգմանում են Աւետարանը այդ խօսակցական լեզւին և սկսում են կարգալու քարոզել: Ուրիշ կերպ վարուել ոչ կարելի էր և ոչ էլ պէտք էր: Այսպէս արին նաև Ս. Մեսրոպ և Ս. Սահակ:

Ասանք թէ այն անգլիացի և ամերիկացի քարոզիչները օտար են այն վայրենի ժողովուրդների համար, իսկ Սահակ և Մեսրոպ իրենց ժողովրդի հարգատ զարուակներն էին: Այդ դէպքում օրինակ առինք այրանացիներին, ափսաղներին, չէլեններին և մեր բնակակից եղիղներին որոնք մինչև այժմ անգլի ժողովուրդ էին, և այժմ այրուբան հնարելով հիմք են դնում մայրենի լեզուով գրականութեան: Արդեօք նրանք հնարում են որեւէ արուեստական լեզու, թէ՞ գրում են ճիշտ այնպէս, ինչպէս իրենք են խօսում: Բնականաբար խօսակցական լեզուն են անց կացնում գրականութեան, որովհետև ուրիշ կերպ կարող չեն:

Գրաբարը իբրև արուեստական լեզու ընդունելը ենթակայական (subjectif) մտածողութիւն է: Մենք որ տարիներ շարունակ աշխատելով հազիւ կարողանում ենք սովորել գրաբարը և հիանում ենք միշտ նրա գեղեցկութեան, ճոխութեան ու պերճութեան վրայ, չենք կարողանում ըմբռնել թէ ինչպէս կարող էր նա լինել մի անգրագէտ հասարակ ժողովրդի խօսակցութեան լեզուն: Եւ այս անըմբռնելի երևոյթը բացատրելու համար մերթ ինչունում ենք Գ կամ Դ գարում գալուստիւն ունեցած և յոյն, պարսիկ կամ ասորի տառերով եւ կամ գանձիլեան նշանագրերով գրուած հայալեզու գրականութիւն և մերթ ընդունում ենք որ այդ լեզուն երբէք խօսուած չի եղել, այլ հանճարեղ Մեսրոպի ու Սահակի ձեռքով շինուած արուեստական մի լեզու է եղել: Բայց ինչպէս որ անհիմն է ենթադրել նախամեսրոպեան որեւէ հայալեզու գրաւոր գրականութիւն, նոյնպէս և անսեղի է մտածել թէ գրաբարը Ծ. գարում շինուած արուեստական մի լեզու է: Մի ամբողջ ժաշովուրդ և նրա զլխով անցած հա-

զարաւոր տարիների ժամանակը ահա սրանք են եղել հայերէն լեզուի հեղինակները. և այս հեղինակները անուշտ աւելի հանճարեղ էին՝ քան իրենց ծնած հանճարեղ զուակները:

Եթէ գրաբարը գեղեցկութեան, ճոխութեան ու պերճութեան, նոյնպէս եւ նրա դժուարութեան պատճառով մենք առաջնորդուինք մտածելու թէ նա մի արուեստական լեզու էր և ոչ խօսակցական, ուրեմն արուեստական պիտի լինին նաև հին յունարէնը, լատիներէնը, սանսկրիտը եւն. որոնք օակայն իրենց ժամանակին խօսակցական լեզուներ էին: Ծոսակցական չլիտի լինէր նաև գերմանացիները դժուար ու հանելուկային կաղաւթեամբ թարգմէնը, որ սակայն այսօր անսպասուած արաբաւոր կիսալայրենի արաբի բերնումն է հնչում:

Գրաբարի արուեստական և ոչ-խօսակցական լեզու լինելու զաղափարը մերժելուց յետոյ, անցնելք խօսել այն մեղով կամ չափաւոր կարծիքի մասին, որով գրաբարը համարուած է ժողովրդական լեզուի կոկուած ու բարեփոխուած մի վիճակը, նրանք՝ որ հետեւում են այս կարծիքին, իբր օրինակ մէջ են բերում մեր արդի աշխարհաբարը, որ հիմնապէս մեր ժողովրդի խօսած լեզուն է, բայց գրագէտների ձեռքով կոկուած ու մշակուած:

Այս օրինակը հենց իրան է հերքում: Ինչպէ՞ս կոկոցին մեր գրագէտները հայ ժողովրդական լեզուն (աւմիգրէնը), ինչպէ՞ս ստեղծեցին նրանից աշխարհաբար գրական լեզուն: Թէ արեւմտեան և թէ արեւելեան աշխարհաբարի հեղինակները առին ժողովրդական լեզուն այնպէս ինչպէս կար, ջնջեցին նրա միջից օտար (սովորաբար թուրքերէն) բառերը, զրին նրանց տեղ հայերէն հոմանիշները, իսկ աղաւաղեալ հայերէն բառերը փոխանակեցին գրաբարի ձեւերով: Օրինակի համար ժողովուրդը ասում էր՝

Սապունը փխ հոտ ունի
գրագէտները զարձրին՝
Օճաւը վատ (կամ գէշ) հոտ ունի.
Ժողովուրդը զանազան բարբառներով ասում էր.

Երեւ. էս տունը բարցր ա
Պ. սա տունը բարս է
Վն. էսա տուն պանցր ի

Ղրի. Էս սօնը պէցիր քա. գրագէտները վերցնելով գրաբարի ձեւերը կազմեցին՝

աշխ. Այս տունը բարձր է:

Քերականութիւնը, շարադասութիւնը և համաձայնութիւնը մնացին անփոփոխ: Բայց քանի որ լեզուի շինութիւնը նշանակում է հին ձեւերի վերանորոգում, հետեւաբար այս շինողական երեւոյթը տեղի կարող է ունենալ միմիայն այն պարագային, երբ լեզուի նագոյն վիճակը յայտնի է: Իսկ երբ այդ հին ձեւերը յայտնի չեն զբաղան մնացորդներով, ուրիշ խօսքով չկան, գրագէտը ստիպուած է լրացած գրի առնել ամենայն հաւատարմութեամբ: Ուրիշ կերպ նյութագիտական անկարելի է: Այսպէս արին և պլտի անէին բողոքական միտոնարները մայրենիների լեզուով Աւետարանը թարգմանելու ժամանակ, այսպէս են անում նաև բոլոր անգիր ժողովուրդները՝ որոնք սկսում են իրենց համար զիր և գրականութիւն ստեղծել. Այսպէս արին նոյն իսկ մեր գրական լեզուի հնարիչները այն բաների հանդէպ, որոնց հին ձեւը կամ չկար և կամ չգիտէին. օրինակ հենց, հերթ, ալարիլ, արանի, ասթար, սկիշ, հարեւան, սկուա, ատեն և այլ բազմաթիւ գաւառական բառեր: Եւ կամ նաև այն օտար բաների հանդէպ, որոնց համապատասխան հին հայերէն ձեւը չկար ինչպէս նախուս, հարած, հալալ, մահտեօի եւ այլն:

Արդ, Մեծորդի կամ Մահուկի առաջ կած որեւէ գրական մնացորդ հայերէն լեզուով, կած նախնի գաբերի հայերէնի վիճակը ներկայացնող որեւէ գրութիւն, որ պէտքի իմանային թէ ինչպէս է եղել այս ինչ կամ այն ինչ բառի հնագոյն հնչուումը և ըստ այնմ բարեփոխելին կամ կողիչին: Մենք գիտենք որ նախ քան Ե. գաբը ոչ մի գրականութիւն չի եղած հայերէն լեզուով: Ուրեմն Սահակն ու Մեծորդը չէին կարող կոկել կամ յարգարել ժողովրդական հայերէն լեզուն և ուրիշ միջոց չուներին եթէ ոչ ճշտու գրի առնել այն ինչ որ լրաց կամ իրենք խօսում էին:

Հակառակորդները իբր քաջացոյց մէջ են բերում այսպիսի մի կէտ. եթէ, ասում են, գրաբարը Ե. գաբի խօսակցական լեզուն էր, պէտք էր որ նոյն գաբի բոլոր հեղինակների լեզուն էլ միատեսակ լինէր.

բայց ընդհակառակը մենք մեծ զանազանութիւն ենք տեսնում Աւետարանի, Եղնիկի, Եփրեմի, Ազարթանգեղոսի, վերջապէս Ոսկեգարի զանազան հեղինակների լեզուի մէջ:

Թէ Ե. գաբի հեղինակների լեզուի մէջ մեծ զանազանութիւններ կան, այդ ընդունում է ամէն ոք. և դրա համար էլ վերեւում Ոսկեգարեան հեղինակներին բաժանեցինք չորս դպրոցի (Եղնիկեան, Կիւրեղեան, Եփրեմեան և Ազարթանգեղեան): Բայց այստեղ լեզու ասելով պէտք է շփոթել բառարանն ու քերականութիւնը ոճի հետ: Ե. գաբի բոլոր հեղինակներն էլ՝ ինչ զրպրոցի էլ պատկանին նրանք, միեւնոյն բառարանն ունին ու միեւնոյն քերականութիւնը. ամենամանչան տարբերութիւնն անգամ չկայ նրանց մէջ որեւէ բառի հնչման կամ գրութեան, որեւէ բառի հոլովման և որեւէ բայի խոնարման մէջ: Չորս դպրոցների տարբերութիւնը կայանում է ոճի մէջ. մէկը պարզ ու հնչոտ, միւսը զարգարուն ու ծաղկաւէտ, միւսը յորդ ու առատ, չորրորդը ծանր ու մուծ: Բայց ոճը բոլորովին այլ հարց է. լեզուն հասարակաց է, ոճը հեղինակինն է. ասաջինք ընդհանուր է, երկրորդը մասնաւոր: Ամէն մի հեղինակ նայած իր կրթութեան, ճաշակին, զգացմունքների նրբութեան, նայած նոյն իսկ րոպէի տրամագրութեան, ունենում է անունն սեպհական ոճ: Բայց այդ չի նշանակում թէ նա դուրս է լեզուից. ոչ. նա հասարակութեան ստրուկն է ու մի քայլ անգամ չի կարող լեզուել լեզուի մէջ ընդունում ձեւերից:

Այսպէս ուրեմն պիտի ընդունենք որ Ե. գաբում առաջին անգամ գրի առնում լեզուն, որ յետոյ գրաբար անունն ստացաւ: Նոյն ժամանակի ժողովրդական խօսակցական լեզուն էր և ժողովրդական ու գրական լեզունների տարբերութիւնը՝ որ այժմ սովորական երեւոյթ է ամէն տեղ, գոյութիւն չունէր այն ժամանակ մեր մէջ (*): Աւետարանի լեզուն հաւատարիմ պատկերն է այն ժամանակ խօսուած լեզուին, այնքան հաւատարիմ՝ որքան անգլիերէն Աստուածաշունչը հաւատարիմ ցուցումն է ԺՁ. և ԺԷ.

(*) Անտոնեան, Պատմ. Հայոց Նոր Գրականութեան, էջ 8-8:

գարհրու մէջ խօսուած անգլերէնին^(*),
 Երբեմն այս բանը երեւում է բաւական
 յայտնի կերպով. բուզանցը որ այնպիսի
 փարփուռ ու միտն ոճ ունեցող մի հեղինակ
 է, տեղ տեղ, երբ անոթը ներկայանում է
 խօսեցնելու իր աշխարհիկ կերտանքին,
 դեռում է նրանց բերանը մի լեզու, որ շատ
 հետու է հեղինակի փարթամ լեզուից և
 կրում է հասարակ ժողովրդական անտաշ
 լեզուի ոճը^(**)։

Դեռում ենք այստեղ այգպիտի չորս օ-
 րինակ.

Պատում է Արշակ Թագաւորը՝ երբ լսում
 է թէ Վաղէս աքսորիչ է ներսէսին.

Քարինք բազումք ի վերայ կայսերն և
 ձեր ի բերելդ քարինք և մեր շատ կան ի
 թափել զատամուռնս նորա ի տալն և ձեր
 ի բերելդ. զմեր վատթարութիւնս յո՞ տա-
 րայց. այդ այդ երախտեացդ եւ դարձու-
 ցանեմ (Բուզ. 107)։

Պատում է Մուշեղ զօրավարը Պապի
 առջև, թէ ինչո՞ւ բռնել է Ուռնայր Թա-
 գաւորին, բայց չէ սպանել.

Ձիւմ զընկերսն զամենեսանս եւ կոտո-
 րեցի. իսկ որ Թագս ունէին, նոքա իմ ըն-
 կերք չէին, այլ քո. եկեացես, որպէս ես
 զիման սպանի, դու զքոյսն այլ իմ յայր
 Թագաւոր ոչ ձգեալ ձեռն կրէք որ թագ
 ունի և ոչ ձգեմ, և մի այլ ձգել լիցի։ Եթէ
 կամիս սպանանի զիս, սպան. այլ ես եթէ
 զայ ինձ ի ձեռն երբէք այր Թագաւոր, որ-
 պէս եկն բազում անգամ, ես ոչ սպանե-
 նեմ զայր Թագաւոր՝ որ զամ մի թագ ու-
 նի, եթէ ոք իս զիս սպանցէ (Բուզ. 203)։

Պատում է Շապուհ Պարսից Թագաւոր,
 երբ Իրաստամատ խնդրում է այցելել Ար-
 շակին.

Խիստ են խնդրուածքդ, զոր խնդրե-
 ցերդ. զի յաւուրք ժամանակաց յորմէ թա-
 գաւորութիւնս Պարսից կանգնեալ է, և
 բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք
 ոք մարդ եղեալ ի մարդկանէ որ իշխեցեալ
 է յիշեցուցանեց Թագաւորաց զոր յայնմ
 բերդի եդեալ զոք է Թագաւորաց, յիշելով
 զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ
 է, թող թէ զնա զայր Թագաւոր ևւ զիմ

ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զա-
 կաւակորդն. քան մինչ աշխատ արարի
 զմեզ ևւ դու աւագիկ զանձն ի մահ եղի
 և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ
 երբք օրէք Թագաւորութեանս Արեացի
 սկզբանէ (Բուզ. էջ 211-2)։

Յանդիմանարար խօսում է Շապուհը
 Վասակ Մամիկոնեանին ևւ Վասակ քաջա-
 բար արասխանում.

— Աղուէս, դու էիր խանգարիչ՝ որ
 այսչափ աշխատ աքաբեր զմեզ. դու ես
 այն՝ որ կոտորեցեր զԱրիս այս չափ մաւ.
 ևւ զի՞ գործես։ զմահ աղուեսու սպանից
 զքեզ։

— Այժմ քա տեսեալ զիս անձաբա
 փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ.
 զի ցայժմ ես քեզ տուիւմ էի ևւ արդ աղ-
 ուէս։ Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ
 էի. մի ոտնս ի միոյ լերին կայր ևւ միւս
 ոտնս իմ ի միոյ լերին կայր. յորժամ յաջ
 ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տա-
 նէի. յորժամ ի ձախ օտնն յենուի, զձախ
 լեառն ընդ գետին տանէի.

— Աղէ՛ տաւր ինձ գիտել, ո՞վ են լե-
 րինքն այնքրիկ զորս դուն ընդ ունջ տա-
 նէիր։

— Լերինքն երկուք, մի դու էիր, ևւ
 մի Թագաւորն Յունաց։ Այն մինչ տուեալ
 էք ինձ Աստուծոյ, զքեզ ընդ գետին տա-
 նիք ևւ զԹագաւորն Յունաց, մինչև և օրհ-
 նութիւն հօրն մերոյ ներսէսի հանգուցեալ
 էք ի վերայ մեր, ևւ Աստուծոյ զմեզ ի
 ձեռանէ չէք թողեալ. մինչև ևւ զնորա բանն
 արարաք, ևւ խրատ նորա եկաց առ մեզ ևւ
 զիտացաք տալ քեզ խրատ մինչև ևւ մեզէն
 աչօք բացք անկաք ի խորխրատու Արգ
 զինչ ևւ կամիս, արաւ (Բուզ. 173)։

Այս բոլորի մէջ մենք ուրիշ բան չենք
 տեսնում, եթէ ոչ միեւնոյն բառարանը ևւ
 միեւնոյն քերականութիւնը՝ ինչ որ Ուկեւ
 դարի բոլոր գրուածներն մէջ։ Տարբեր է
 միայն ոճը, խօսելու եղանակը՝ որ ասի
 յախուան ևւ անհարթ ձեւ։

Մի փոքրիկ ժողովրդական հատուած
 էլ գտնուում է Եզնիկի մէջ. Մին ասէ՛ թէ
 ի մերում զեւզ ծոփացուլ զկող գործեաց
 և զզոչիւնն հանապաղ մեք լսեմք ամենք-
 եան։ Եւ միւսն ասէ. զպայն իսկ իմ աչօք
 տեսեալ է։

Բայց նոյն իսկ ինքը Եզնիկը երբեմն,

(*) Conybeare, Մաքսի, 1893, էջ 213-4.
 (**) Գարագաշեան, շաւակ Սևիկեզ Դպրատան,
 էջ 43-51։

հակառակ իր մշակուած ու նուրբ ոճին, գործ է ածում ժողովրդական անմշակ ոճ. ինչպէս հետեւեալ հասուածում.

Ձի շունն որ շնայ, մինչդեռ իսկ ի գործ շնութեանն իցէ, եթէ ոք շուն կոչէ զնա մըսոստանայ(*):

Այս բարբը ցոյց են տալիս ո՛ր Ոսկե-զարում զրուած հայերէնը ճշտիւ ժողովրդի խօսակցական լեզուն էր:

ԺԸ. Գ Լ Ո Ւ Խ

Ե. ԳԱՐԻ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՐԲԱՆԵՐԸ

Լեզուաբանութեան ներածութիւնից գիտենք որ լեզուն այն անհրաժեշտ միջնոցն է՝ որ ստեղծել է մարդկային ընկերութիւնը իր անդամների միջև փոխադարձ հաղորդակցութիւն պահպանելու համար: Սրանից զուրկ լեզուն գոյութեան իրաւունք չունի: Իբր այն՝ լեզուն պիտի լինի մի և միեւնոյն՝ ամէն ժի ընկերական խմբակցութեան համար, ապա թէ ոչ նա այլևս չի կարող ծառայել իբրև միջոց հաղորդակցութեան և հետեւաբար կը զրկուի իր գոյութեան իրաւունքից:

Բայց լեզուն իբրև մարդկային մտքի ստեղծագործութիւն, իբրև պատկեր նրա քաղաքակրթութեան զարգացման և իբրև արդիւնք մարդու ձայնական գործարանների գործունէութեան՝ չէր կարող մնալ քարացած վիճակում: Նա շարունակ պիտի փոփոխուէր՝ համաձայն բարելւումների օրէնքներին:

Միևնոյն ժամանակ մարդկային հաղորդակցութեան միութիւնը բացարձակ չէ. ամէն մի համայնք իր ուրոյն կեանքն ունի. և այս ուրոյն կեանքը՝ միացած կլիմայական տարբեր պայմաններէ և ձայնական գործարանների տարբեր տիպի կազմութեան հետ՝ յառա՛ է բերում մարդկային լեզուի մէջ տարբերութիւններ:

Առաջինները կազմում են լեզուի դարուց զար փոփոխուած կերպարանքները, երկրորդները ստեղծում են միևնոյն շերտանում գնահատան բարբառներ:

Այս երկու երևոյթները անխուսափելի են ամէն մի լեզուի կեանքի մէջ:

Ոսկեզարեան հայերէնը մեր լեզուի կեանքի մէջ առաջին երևոյթի այն առաջին պատկերն է՝ որ աւանդել է մեզ պատմութիւնը, նրանից առաջ եղած պատկերները թէև գիտենք որ կան, բայց մեզ անծանօթ են: Բայց միևնոյն ժամանակ, նոյն այդ Ոսկեզարի շրջանին պէտք է ընդունինք թէ կար նաև երկրորդ երևոյթը, այն է զանազան բարբառներ հայերէնի մէջ, որոնցից մէկը միայն բարձրացաւ գրականութեան, այն է ոսկեզարի հայերէնը:

Հայերէն բարբառների Ծ. զարում գոյութեան համար ունինք մի զօրեղ պատմական փաստ. դա Եղնիկի մի վկայութիւնն է:

Սոսելով այն մասին թէ ոգի, հոգի, շունչ կամ քամի ըստ էութեան միևնոյնն են, Եղնիկը իբրև ապացոյց է բերում բառերի հիմնական նշանակութիւնը և ստում է. Ասի և դև ոգի, այլ ոգի չար . . . զոր թէպէտ և ի մեր լեզու՝ այս չար սանձք, որպէս ի խտրանաց հարցն մերոց առաջնոց ըստ սովորութեան ի մեզ կարգելոյ, այլ գիտեմք՝ եթէ այն հողմ է և հողմի՝ ոգի, ըստ յառաջագոյն ասացելոյ: Քանզի յորժամ մին սանձք՝ թէ սիւք շնչէ, սարճեալ սանն՝ այս շնչէ:

Վերջին նախադասութիւնից երևում է՝ որ Եղնիկը խտրութիւն է գնում ստորնեայց հայերէնի և իր խօսած հայերէնի միջև: Եւ որովհետև Եղնիկը իբրև կողքացի պատկանում է հիւսիսային Հայաստանին, ուստի, ստորնեայք բառով պիտի հասկանանք հարաւային Հայաստանի ժողովուրդը, իսկ Եղնիկի շրջանը, այն է հիւսիսային Հայաստանը կարելի է կոչել վերին: Այսպետանի գաւառների այսպիսի բաժանումը և միևնոյն անուններով՝ յայտնի է մեզ նաև ուրիշ տեղից: Բիւզանդ Գ. իզ. խօսելով Պարփիկների արշաւանքի մասին՝ Մերուստանի կոտորէին զամենայն քնակիչսն վերնադաւառացն հայոց. մինչդեռ թագաւորն Արշակ ի կողմանն ստորին դաւառացն յԱնգեղտանն էր յուտեստ, զմիջնաշխարհն քանդեալ բրեալ զօրքն Պարսից սպականէին: Անցողակի յիւնքն որ Եղնիկի տուած բաժանումը համապատասխանում է մեր

(*) Mullet, Revue des Etudes Arméniennes.

արդի վիճակին. ինչ որ այնտեղ վերին է կոչուում, մեր այժմեան արևելեան կամ ուսուսակայոց կոչուած բարբառն է, իսկ ինչ որ ստորին է կոչուում, մեր այժմեան արևմտեան կամ տանկահայոց կոչուած բարբառն է:

Բայց Սելնիի վկայութիւնը միայն բարբառների անուանակոչութիւնը չի տալիս, այլ նաև այդ բարբառների մէջ մի բառի գործածութեան տարբերութիւնը: Եթէ քառն է այս, որ գործածական էր թէ վերին և թէ ստորին Հայաստանում, բայց վերին Հայաստանում գործածոււմ էր սատանայ նշանակութեամբ, իսկ ստորին Հայաստանում քամի նշանակութեամբ: Վերին Հայաստանում քամի նշանակութիւնը յայտնի չէր և այդ պատճառով է որ Սելնիից հաստատելու համար այդ նշանակութիւնը՝ որ ինքը բառի առաջին և հիմնական նշանակութիւնն է համարում, Գալիստոսը գործիչուեան ասելով մէջ է բերում ստորեայոց այս ընդ դարձուածը: Վերին Հայաստանում քամի իմաստով գործածական էր սիւք կամ սիւք բառը: Բայց այդ չի ստիպում մեզ անպատճառ ընդունել որ սիւք բառը գործածական չէր ստորին Հայաստանում, որովհետև սիւք իբրև ստորական փոխառութիւն, աւելի հարաւային Հայաստանում գործածական եղած պիտի լինէր: Կատարուել է լեզուաբանական սովորական մի երևոյթ, երկու հոմանիշներից (այս և սիւք) հնագոյնը տեղի է տուել նորի առաջ, բայց դեռ բոլորովին չի ջնջուել և պահուել է միայն ոգի կամ չար ոգի նշանակութեամբ:

Բարբառների գոյութիւնը Ե. գրում կարելի է հաստատել նաև Ոսկեղարից մեզ հասած գրական գործերի լեզուական քնննութեամբ:

Ամէն մի անհատ՝ որ գրում է որևէ ոչ մայրենի լեզուով կամ բարբառով, ինչքան էլ լու իմանայ այդ օտար լեզուն կամ բարբառը, այնուամենայնիւ իր մայրենի լեզուից կամ բարբառից որևէ հետք կը թողնէ: Երբ մի վանեցի գրում է գրական հայերէն, լինի զա արևելեան թէ արևմտեան բարբառով, անշուշտ մի քանի տեղ որոշեալ բառերի ը յօղը կուլ պիտի տայ: Երբ Լէօն իր Հայոց Պատմութեան մէջ (Ա. էջ 690) գրում է «Տիգրանից մզ

էր ապրուժ, զբանով մատնոււմ է իր Ղարաբաղի լինելը» (Ղարաբաղի բարբառում մօտ նախադրութիւնը վերցնում է բացառական խնդիր, մինչդեռ մեր միւս բոլոր բարբառներում սեռական-արական խնդիր)՝ կամ երբ Մանանդեանը իր հրատարակած Նոննոսի մէջ (Մարտոս 1903, էջ 5, ծան.), գրում է պիտի լինիր, փոխանակ պիտի լինէր, զբանով մատնում է թէ խօսում է Կարնոյ բարբառը: Նոյն երևոյթը տեղի պիտի ունենար անշուշտ նաև Ոսկեղարում:

Բայց դժբախտութիւնն այն է որ մենք չգիտենք և չենք էլ կարող իմանալ Ոսկեղարի պաշտօնական կամ կենտրոնական գրական լեզուն իր անխառն ձևի տակ, որպէսզի իւրաքանչիւր հեղինակի շեղումները բռնէինք: Զգիտենք նոյն ուր ճատ երկերի հեղինակների անունը, որ մնաց իմանալ նրանց որտեղացի լինելը, որպէսզի գտնէ այդ միջոցով իմանայինք բարբառների որոշ յատկութիւնները:

Սակայն կարելի է, առանց այս նախապայմանների, քննել Ոսկեղարի հայերէնը ինք իր մէջ և եղած տարբերութիւններից եզրակացութիւններ հանել:

Այս մասին մի տեսակի մանրազնին աշխատանք է կատարել Նորայր Բիւլատնիցան, որ թէև բոլորովին այլ նպատակով կարդացել ու բառաքաղել է ամբողջ Ոսկեղարեան հայ գրականութիւնը և գտել այնտեղ 624 բառ, ոճ, սացցուած կամ դարձուած, որ յատուկ են Կորիւնին, Ազաթանգեղոսի, Փաւստոսի, Մակարայեցոց գրքին ու Եւթաղին, բայց չկան միւս Ոսկեղարեան գրուածների մէջ:

Գաղափար տալու համար այս աշխատութեան մասին զննեք նրանից երեք օրինակ.

1. Մէկի անունը տալու համար Ոսկեղարեան հեղինակները սովորաբար առում են ձրում կոչէին, որում անուն կոչէր, որ կոչէր, որում անուն, որում անուն կոչէինք. բայց Կորիւն և իր խումբը սիրում է գործածել ձրու անունն ճանաչէր. այսպէս գործածուած է 11 անգամ, իսկ մնացեալ մատենագրութեան մէջ ոչ քան 1:
2. Իբրև մակբայից յետոյ սովորաբար գործածուում է որևէ զիմաւոր բայ. ինչպէս՝ իբրև ետես, իբրև լուսու ևն. Կոր-

իւնի խումբը սիրում է գործածել իբրև մակ-
բայից յետոյ անցեալ գերբայ. այսպէս
գտնում ենք՝ իբրև ի վերայ հասեալ, իբրև
կարգեալ, իբրև հայեցեալ, իբրև զգաց-
եալ, իբրև տեսեալ, իբրև լուեալ, զոր
իբրև լուեալ, իբրև գիտացեալ, ընդամենը
Ս անգամ, իսկ մնացեալ մատենագրութեան
մէջ և ոչ մի անգամ:

3. Նուազ «գինու մեծ բաժակ» բառը
գործածուած է Կորինթի խմբի մէջ 6 ան-
անգամ. բայց ոչ մի անգամ չկայ մնացեալ
Ոսկեգարեան գրականութեան մէջ:

Այս առանձնյատեղութիւններից նո-
րայրը այն եզրակացութիւնն է դուրս բե-
րում, որ Կորինթ, Ագաթանգեղոս, Բիւ-
զանդ, Մակարայեցի ու Եւթաղ միևնոյն
անձի գործերն են, առայնը ինքնագիր,
միւսները թարգմանական. և այդ անձն է
Կորինթը:

Ինչ վերաբերում է ոճերի, դարձ-
ուածների, զանազան ասութեանց, բառերի
այս կամ այն ձևով դասաւորութեան, կամ
ուրիշ այս կարգի արտայայտութեանց, նո-
րայրի եզրակացութիւնը կարող է ճիշտ լի-
նել: Բայց ինչ վերաբերում է քերական-
նական ձևերի, մասնիկների, բառերի եւ
մանաւանդ արմատական բառերի գործա-
ծութեան, եզրակացութիւնը քայքայեալ-
պէս սխալ է: Անկարելի բան է ընդունել
որ օրինակ նուազ քառօկոյ, ատորչան
եկրակատուն բառերը, կամ անի յոգնա-
կերտ մասնիկը (աւագանի, կանանի, աղա-
տանի, զխանի ևն.), որոնք միայն Կոր-
ինթի խմբում են պատահում, յատուկ լի-
նէին միայն Կորինթի անձին: Քերականու-
թիւն և բառարան մասնաւոր անհատի գործ
կամ սեպհականութիւն չեն: Դրանք յա-
տուկ պէտք է եղած լինին մի որոշ բար-
բառի, որ խօսում էին Կորինթը, Ագա-
թանգեղոսը, Բիւզանդը և Մակարայեցոց
գրքի և Եւթաղի թարգմանիչը կամ թարգ-
մանիչները:

Այս տեսակէտով մտանալով խնդրին,
Նորայրի. կազմած աշխատութիւնը կարող
է ուրեմ ծառայել միզ՝ երևան հանելու
համար վերոյիշելով բարբառի առանձնա-
յատկութիւնները:

Ինչպէս վերեւում ասացինք, Նորայրի
հաւաքած յատկաբանութիւնները 624 հատ
են: Այս թուից մի մասը բուրոսովին ի դուր
է գրուած, որովհետև

1. Իբրև պատմական բառեր անշուշտ
գտնուելու էին միայն Կորինթի խմբի մէջ
և ոչ ուրիշ տեղեր էլ. ինչ. Այրարատեան,
Նոր քաղաք (Վաղարշապատ), Մազխազ,
Մաղխազութեան տուն, Հայոց մեծաց ևն:

2. Թէև ցանցաւ, բայց գործածուած
են միւս մատենագրութեանց մէջ և այդ-
քանը բաւական է որ Կորինթի խմբին յա-
տուկ ձև չհամարուին. ինչ. Նժոյգ, դեա
պան ևն:

3. Հազուադիւր են նաև Կորինթի
խմբում և տարօրինակ չէ որ ուրիշ տեղ
գտնուած չլինին. ինչ. Թանձրախուն,
մեծաւ լրջմտութեամբ անշուրհ առնել:

4. Բոլորովին սովորական բառեր են
և կարիք չկայ բնաւ իբրև այս կամ այն
հեղինակի յատկաբանութիւն յիշելու. ինչ.
Յունաց և Հռոմոց աշխարհն, երանելին
Ղուկաս ևն:

5. Մանօթ են ուրիշ հեղինակներից,
բայց Նորայր աչքից փախցրել է. օր. յանա
դիման լինել թագաւորին ճեղկայանալս
ոճի համար տալիս է 12 օրինակ և ոչ մի
օրինակ միւս մատենագիրներից. բայց
կամ. յանգրիման եղեւ արքային ՍԿԲ.
Փայսեր ևս քեզ պարտ է յանգրիման լինել.
ԳՄ. Վերջապէս մենք դուրս պէտք է հա-
նենք այն դարձուածները, որոնք թէև
կարող են համարուիլ որոշ հեղինակի նա-
խախրած ձև և ըստ այսմ օգտակար լինել
Նորայրի մտադրած նպատակին, բայց ան-
կարելի է վերագրել որոշ բարբառի առանձ-
նյապատկութեան, որովհետև ընդհանուր
հայերէն են. այսպէս՝ զարս զօրութեան
իւրոյ, բուն գունդն, ինքն իսկ թագաւորն,
մանկիկ մի փոքրիկ ևն:

Կատարելով այս գտումը և գուրգ Ես
նելով Նորայրի աշխատութիւնից վերոյիշ-
եալ հինգ կարգի ասութիւնները, մենք
իբրև Կորինթի բարբառին առանձնյատուկ
ձևեր գնում ենք հետեւեալները.

Ա. Բարդ կամ անանգ ձևեր

Արուեստարիտեւ, անարգամեծար, արու-
քելակից, ամենափրկիչ, յուսալից, հայ-
բարբոյ, փառաբանիչ, աստուածակարգ,
գելարան, դիւբահաս (հեշտ), ասնախմբիչ,
ինքնատես (ակնատես), կենդանատուք
(կենսատու), մենակուր (մենամարտող),
տեղապահ, ըստանձնել Վերելը (փխ. առ.

նու՛՛մ՝ բառնալ ըստ անձին), միահաղոյն (այլք՝ միանգամայն), միասնական տանաբակից (սեղանակից), անպիտոյ (չպիտոյ), վիպայբան կամ մարտիրոսարան (մատուռն), ձեռնաղբէլ, աստուածակերպ, գասադա, վերնազաւառք (վերին կողմանք կամ աշխարհք), միջնաբերդ, յառաջու (յառաջադոյն), կուսաստան (կուսանոց), առիւծաբայ (իրբն առիւծ)։ - Հանապազ բառով բարձր կանապազատարած, կանապազաբուխ, կանապազախօս, — կանապազակիր, կանապազատես, — միւսներն ունին մշտնջենաբուխ, մշտակիր, միայն մէկ անգամ կայ կանապազատուս։

— բարեացապարտ, չարեացապարտ
 — աշխարհակիր, անուանակիր, խաչակիր
 — նախափկայ, նախածանօթ (յառաջածաղորմիտ, թագաւորանիտ) [նօթ,
 — երկնաչառ, ամպաչուէր, նուաչու (միւսները չուսով ոչ մի բարդ շուշին)։

Բ. ՈՆԵ ԵՆ ԱՍԱԳՈՒԱԾՆԵՐ

1. որոյ անունն ճանաչէր
2. փոյթ ի վերայ ունել զջանալ
3. տեսուչ եպիսկոպոս
4. ի ժամադիր կողման կասանել
5. թողուլ վերակազու (ետեղապար, անուշ, պահապան են.) փխ. կացուցանել
6. որուն անուն . . . փխ. որում անուն էր
7. դոյ երևել (երևան եկաւ, յայտնուեց)
8. ի կանգիտ փոխել (թաղել նահատակը)
9. աստուածեղէն կրօն (աստուածապաշտութիւն)
10. ծածուկ լուսաւորութիւն (զազտնի խորհուրդ)
11. կոյս կոյտ փխ. կողման կողման
12. խոտաբարակ լինել (խոտ ճարակել կամ ուտել)
13. տեսանել ի բացէ (այլք ի բացուստ, ի հեռուստ, ի հեռուստանէ)
14. Գինի կամ բաժակ ի մատունս (փխ. ի ձեռս)
15. Ուխտ քահանայութեան (կղերականք)
16. յայնժամ դեռ ես
17. երևոյթ տեսիլ (տեսիլ ծանականաց)
18. հրովարտակ առնել կամ տալ (հրովարտակ առաքել)
19. փոխանակել կամ փոխանակ տալ զանձինս (տաք փամ մասածը զածնն վասն)
20. Ի հնոց ժամանակաց հետէ

21. Ձեռն ի ձեռն (վաղվաղակի)
22. բովանդակել գունդ կամ զօրք (չարածողով լինել)
23. զօրածողով է (այլք զօրածողով ինի)
24. զօրահատոյց առնել (զօրքի մի մասը ուղարկել)
25. Ի հարկի կացուցանել (զինմ ընդ հարկաւ, հարկատու առնել են.)

Գ. ԱՐՄԱՏԱԿԱՄ ԲԱՌԵՐ

1. կղեր (կղերական, կղերիկոս)
2. տարուշան (կրակատուն)
3. նուագ (բաժակ)
4. գումարակ (գունդ զօրաց)
5. դշակ (բերդ, ամրոց)

Դ. ԱՅԻՄԱՆՍ ԲԱՌԵՐ

1. հայրենիք (հայր նշանակութեամբ գործածուած)
2. քնակութիւն (սեփականութիւն)
3. միամտութիւն (հաւատարմութիւն)
4. թափել (նշ. յափշտակել, իսկ ըստ այլոց՝ յեա առնորդ զյափշտակեալն)
5. զանազան (աննման)
6. զգալ, զսեղ, տեղեկանալ, իսկ ըստ այլոց՝ զնկատել, զգալ
7. Ի բարձուէ (ի բարձրութենէ)

Ե. ՔԵՐԱԿԱՄԱԿԱՆ

1. Իբրև մակբայից յետոյ գործածուում է անցնալ զերբայ փոխանակ զիմոււոր բայի - ինչ - իրբն հասալ փխ. իրբն ենաս Փոխանակ զիմուորի անցնալ զերբայի գործածութեամբ այլ օրինակներ ետկան :

2. Անի յօղնակերտ մասերկով կողմըւած բառեր - ինչ . սուտանի, կանանի, աչատանի, զլխանի, զործածուած ընդամէնը 39 անգամ, Մնացեալ ամբողջ գրած կանութեան մէջ մէկ անգամ կանանի 5 մէկ անգամ ընկերանի :

3. Ուրիմ մասերկով բառերից բարդուած ձեեր - ինչ . յարութիւնական, արդարութիւնարբեր, արքայութիւնարբեր, օծութիւնընկալու, օրհնութիւնարբեր, միթիմարութիւնարբեր, յարութիւնազործ, նեղութիւնակիր, փոկութիւնազործ, քուսութիւնարբեր, ամուսնութիւնընկալ, օրհնութիւնընկալու : Այսպիսի կազմութեամբ բառեր չկան Մնացեալ հեղինակների մաս, բացի երբ

կու բառից՝ իմաստութիւնախնդիր և վըրկութեանական, երկուսն էլ ձեռագրական սխալ են թւում:

4. Ինքնին թագաւորն, իշխանն փխ. ինքն թագաւորն . . .

5. Յայնց պատճառանաց (յայս պատճառաւ):

Այս կինգ կարգի առանձնայատկութեանց մի մասը կարող է նոյնպէս կեղծ կամ պատահական լինել (դատելով խնդիրը միայն բարբառային տեսակետով): Այսպէս մենք գիտենք որ հայերէնը բարդութեանց մէջ բաւական ազատ է, ուստի կարող է պատճառն որ կորին անձնանուն բարդ բառերի սիրող լինէր և այդպիսի բարդ ձևեր կերտելով իր գրուածքը զարգարէր: Այսպէս են օրինակ՝ աստուածակարգ, հայրաբարոյ, անարգամեծար ևն: Բայց ուր որ մի սկզբունք կայ, կարելի է այնտեղ բարբառային առանձնայատկութիւն տեսնել. այսպէս ըստ նորայրի Ոսկեդարի մէջ շուրտով բարդութիւններ չկան և միայն կորիւնի խումբն է որ ունի այսպիսի բառեր (երկնաշու, ամպաշու, նաւաշու): Արդ այս բառերը կարող են այդ բարբառին յատուկ լինել: Միւս կարգերի առանձնայատկութիւնները, ինչպէս վերևումն էլ նկատեցինք, աւելի ուժեղ են և անշուշտ, ինչպէս արմատական բառերը, ցոյց են տալիս առանձին բարբառ:

Ենթադրելով թէ մեր պատճառարաւ նախնիները բասական զօրեղ են և ընդ զուենելով կորիւնի լեզուն իրեն Ս. զարի առանձին բարբառ, մենք կարող ենք այժմ քննել թէ Հայաստանի որ շրջանին յատուկ էր այդ բարբառը: Անշուշտ եթէ իմանայինք թէ կորիւնը որտեղացի է, խնդիրը վճռուած կը լինէր, բայց այդ քանի յայտնի չէ. որովհետև հրէայ է այն կարծիքը կամ ենթադրութիւնը, թէ կորիւնը վրտան կամ Նոյն իսկ վրացի էր: Բայց յայտնի է որ կորիւնը Այրարատեան նահանգից չէր, որովհետև եթէ գիտենք օր Սգնիկը այս նախանգից էր, փակ կորիւնի լեզուն Սգնիկի լեզուից տարբեր է, ուրեմն և կորիւնը չի կարող լինել Այրարատից: Նմանապէս կորիւնը Տարօնի շրջանից էլ չի կարող լինել, որովհետև Մեարոպը՝ որ Տարօնի շրջանից է, կորիւնից տարբեր լեզու ունի Առակաց գրքում: Մնում են Հայաստանի արևելա

եան և արևմտեան նահանգները. առաջինը Պարսկաստանի սահմանակից, Գրիգորը յունաց սահմանակից: Այս երկուսից ընտրելի է անշուշտ առաջինը, ինչպէս ցոյց են տալիս կորիւնի լեզուի առանձնայատկութիւններից մի քանիսը. այսպէս մ. Ատրուշան, նուազ, գումարտակ գուտ պարսկական փոխառութեանց գործածութիւնը: Զ. Պարսկական անի յոյնակերտ մասնիկով կազմուած բառերի յաճախութիւնը, Գ. Անցեալ դերբայի յաճախակի գործածութիւնը գիմաւոր բայի փոխարէն, ինչ որ նոյնպէս պարսկերէնի մէջ ընդունուած ձև է:

Երևան բերելով Ս. զարի մի բարբառային է արևելեան Հայաստանի բարբառը, մենք կարող ենք այժմ ընդհանրապէս նամատարութեան գնել այդ բարբառը միայն երի և յատկապէս Սգնիկի, այն է զուտ Այրարատեան բարբառի նեղ և կշռել նըրանց էական արտերութիւնը:

Լեզուաբանութեան ներածութիւնից յայտնի է որ մարդկային լեզուները բաժանուում են զանազան լեզուախմբերի, որոնց ստորաբաժանումներն են հելը, լեզու, բարբառ և ենթաբարբառ: Բացի առաջինից, որ մի յօրից յառաջացող բոլոր լեզուների ընդհանուր գումարն է ներկայացնում, ոչ մի տեղ որոշ սահման չկայ: Զգիտենք և չի էլ կարելի իմանալ թէ ինչն է կազմում իրական սահմանը երկու հիւղերի միջև, կամ աւելի խոր գծալով՝ ուր է սկսում լեզուն, ուր բարբառը և ուր ենթաբարբառը: Ոչ միայն ամէն ինչ՝ յարաբերական է, այլ և պայմանական ու պատահականը Դրա համար է որ շատ անգամ գիտունները տարբեր տարբեր բաժանումների են հետևում. մի ժամանակ հնդկականն և իրանական լեզուները՝ անարբեր հիւղեր էին հաշուում, այժմ միասին կազմում են արիական խումբը: Այսօր էլ Բալթիկ-սլաւական լեզուաճիւղը շատերի համար կազմում է երկու առանձին հիւղ, Բալթիկ եւ Սլաւականը Աւելի վառ են աւելի փոքր ստորաբաժանումները:

(Եւր.) ՊՐՈՑ. Հ. ԱՃԱՌԱՅԱՆ